

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՀԱՅՈՐ ԻԳ. ՊՐԱԿԱ.

1885

ՅԱՆ. ՓԵՔՐ. ՄԱՐՏ

ՀԱՆԴԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ — ՄՐԷՆ

Սնհերքելի ճշմարտութիւն է, որ Հա-
յաստանը մի պատմական երկիր է. նո-
րա մէջ ամէն մի քայլափոխում նկա-
տելի են հոյակապ և ճարտարարուեստ
շինութիւնների կիսաքանդ և կիսա-
կործան մնացորդները. հոյակապ գիր-
քով տեանվում են տակաւին հրաշա-
կերտ վանքերը, անառիկ ամրոցները,
վիթխարի բուրգերը, գեղեցկաշէն պա-
լատները և ամուր մարտկոցները. ու-
րոնք անկասկած կենդանի կոթողներ
և շօշափելի վիկաներ են Հայ ազգի
մեծութեան, ճարտարապետութեան,
ազգամտփոխական հմտութեան, դպրու-
թեան և ճշմարիտ քրիստոնէութեան.
Հայ աշխարհի ամէն մի անշքացած
բեկորը, մի կտոր մամուլապատ քարը,
մեր պատմութեան համար՝ ահագին
գանձ և հարստութիւն է պարունա-
կում իւր մէջ... Անուրանալի է նաև՝
որ հայկական ճարտարապետութիւնը
ծաղկեցաւ և իւր կատարելութեանը
հասաւ Ժ-ԺԱ դարերում, որ ժամանակ
և բարձրացան Անիի բուրգերն ու պա-
րիսպը, հոյակապ եկեղեցիքը, աշտա-
րակներն ու պալատները, և այլն. ու-
րոնք և գերազանցեցին ժամանակակից

բոլոր ճարտարապետական քանքարը
և գիտութիւնը...

Տասներորդ դարու նշանաւոր շինու-
թիւններից մէկն էլ է Մրէն, իւր գրմ-
բէթաւոր եկեղեցիով, կանոնաւոր բը-
նակարաններով, պալատներով, բուր-
գերով, դարպասներով, և այլն:

Մրէնը Բաղրատունի թագաւորաց
պեղեցիկ ամարանոց կամ թերեւ աշ-
նանոցն էր. դա գտանվում է Շիրակի
գաւառում, Անի մայրաքաղաքից գը-
րեթէ 7-8 ժամի ճանապարհ հեռա-
ւորութեամբ, նորա արեւմտա-հարաւ-
ային կողմում:

Մրէնը դրուած է մի լայնածաւալ
դաշտի կենդրոնում. տարածութիւնը
կարելի է 20 քառակուսի մղոն համա-
րել՝ Երկու՝ արեւելա-և-արեւմտա-հա-
րաւային կողմերում՝ անդնդախոր և
ժայռախիտ ձորեր կան, որոնց առա-
ջինի միջից՝ ահագին շառաչիւնով անց-
նում է փրփրադէզ Ախուրեանը. իսկ
երկրորդից՝ խժկոնից ուխտի քաղցրա-
համ առուակը՝ իւր մեղմ պղպջակնե-
րով, որ լծափվում է Ախուրեանի ծո-
ցը: Հեռուից հսկայական գիրքով նըս-
տած՝ երևում է Հայաստանի ալեղարդ

թագուհին՝ Մասիսը, իւր ձիւնապատ
զագաթով:

Դաշտի գրեթէ կենդրոնում գրուած
է զիշը, իւր սխարլի շինութեանց կիւ-
աւեր մնացորդներով, բնապարաննե-
րի քայքայուած որմերով, և ամայացած
ու անապատացած այգիների կիսակոր-
ծան շրջապատներով, որոց մէջտեղում
հրաշակերտ եկեղեցին իբրև մի այրի՝
գրկուած իւր բոլոր պաճուճանքներից,
կարծես, արտասառք աչքերին՝ յիշելով
մեծ և փառաւոր անցեալը՝ ողբում է
աղէտալի ներկան: . . .

Այդ սրբութեան գեղեցկաշէն տա-
ճարը, որ կառուցել է Դաւիթ Սահա-
ռունին 614 թուականում, կաթոլիկէ
եկեղեցի անուում, իւր զմայլեցուցիչ
ճարտարապետութեամբ, սքանչելի փա-
րուածքներով, քանդակներով ու մա-
նուածքներով, մասամբ պատկերացը-
նում է Տեկուի եկեղեցին, կամ ըստ
մեծի մասին՝ Տայլարի մենաստանը:


Արևմտեան որմը՝ մի քանի արշին
բարձրութեամբ թաղուած է հողի և
քարի շեղջերի մէջ, որ տեղից և գտան-
վում է եկեղեցու առաջին մուտքը. այս
դուռը քառակուսի դիրք ունի. անցքը,
կամ ինչպէս սովորաբար ասում են,
ճակատը (Ե. 9) զարդարուած է գը-
րեթէ մէկ արշինաչափ բարձրութեամբ
5 հատ ուռուցիկ արձաններով, որոն-
ցից մէջ տեղի երեքը պատկերացընում
են 3 աւետարանիչներին, որոնք բռնած
ունին Աստուծոյ խաչքերը, իսկ երկու
աջ և ձախ կողմերի արձանները թե-
րևս հրեշտակներ լինին, որոնք մտա-
նանիշ լինելով զէպ'ի փրկչի աշակերտ-
ները՝ պատուիրում են հնազանդուել
Աստուծոյ խաչքերին: Սոցա բարձրը,
կիսադաճը կամարի ներքև շինուած են
երկու աւելի մեծ և բարձր արձաններ,
(Ե. 10). զորա թուշունի պէս թեւեր
ունին. աջ ձեռքերը կտրծքերին դրած,
որ հպատակութեան և խոնարհութեան
յատկանիշն է, թեւերս ազդեցում են ե-
կեղեցականների համար և պահպա-
նում են նոցա: Ինչպէս ասացինք, այս
երկու հրեշտակների բարձրով՝ անց-

նում է դռան կիսաբոլոր շրջանակը
նեղ և սրանկիւն շերտերով, որի վերայ
քանդակուած կան խաղողի լայն տերև-
ներ ուռուցիկ ողկոյզներով:


Այս մուտքի հիւսիսային և հարաւա-
յին կողմերում գրուած են մի մի հատ
նեղ և երկար պատուհաններ, որոնցից
հիւսիսայինի բարձրը քանդակուած
կոյ մի շարք գեղեցկահիւս խաչար-
ձանների, իսկ դոցա բարձրը մի ուրիշ
խաչարձան քառակուսի դիրքով և գե-
ղեցիկ քանդակներով: Հարաւային պա-
տուհանի բարձրից անցնում է քանդա-
կագործ կամարը, որի ձախ կողմում
գրուած են երեք կարգ և թուով 11
հատ խաչարձաններ:

Դռան բարձրը, եկեղեցու ուղիղ
կենդրոնում, գտանվում է մի ուրիշ ա-
ւելի մեծ և երկար պատուհան կիսա-
բոլոր, քանդակագործ կամարով: Որ-
մի բոլոր կատարներովը անցնում է
քանդակագործ գունդիգէ (corniche),
որը անգամ մարդիկների և մասամբ
բնութեան հարուածներից տեղ տեղ
մաշուել և կործանուել է: Այս պատի
երկարութիւնը 30 արշին է:

Հիւսիսային որմը փոքր ինչ նմա-
նում է այս պատին, ունի չորս պա-
տուհաններ և մէկ դուռ. պատուհան-
ներից մէջը գտանվում է դռան բար-
ձրում, որ քանդակագործ շրջանակով
խաչաձև դիրք ունի. դորա բարձրը
յրուած է մեծ և երկար պատուհանը
քանդակագործ լայն շրջանակով. մնա-
ցեալ երկու պատուհանները գրուած
են խաչաձև լուսամուտի աջ և ձախ
կողմերում: Այս կողմից մուտքը նոյն-
պէս քառակուսի է, որի ճակատին դը-
րոշմուած կան, գրեթէ մէկ արշին բար-
ձրութեամբ՝ հինգ հատ ուռուցիկ ար-
ձաններ. որոցանից արեւելեան կողմինը
մի ձի է (Ե. 10), բաշը հիւսած, թամ-
բը մէջքին և սանձը բերանում. սորա
առջև կանգնած է արձակ զգեստով
լայն մանթիան ուսին, զլուխը փաթա-
լած, լայն վարտիքով մի բարձրահա-
սակ մարդ, որ և բռնած ունի երկար
ու անպաճոյճ խաչը. սորա հանդէպ



Կաթողիկէն, Արեւմտեան Կողմն



Կաթողիկէն, Հիւսիսային Կողմն

ծնկի չըջած՝ դատանվում է մի սյլ մար-
դի արձան, որը նոյնպէս բռնած է
խաչը. իսկ այս վերջինի ձախ կողմից
խնկարկում է խաչին մի բարձրահա-
սակ հոգևորական, որ ոլորուն ընչաց-
քով՝ կարճ մօրուք ունի. սորա մօտ
կանգնած կայ եօթն ճիւղերի բաժա-
նուած երեքական հատ լայն տերևներ.
ըով մի կուպիտ ծառ. Որմի կատարները
աւելի քնատուած են և սրբատաշ քա-
րերից ու քանդակագործ գոռնիկներ.
րից գրեթէ իսպառա մերկացած:

Հարաւային որմը 40 արշին երկայ-
նութիւն ունի և նմանում է հիսիսա-
յին պատին. սոցա մէջ կայ այն դանա-
զանութիւնը միայն, որ այստեղ փո-
խանակ չորսի՝ երկու պատուհաններ
կան, և 16 հատ խաչարձաններ. գուռը
որմի ձախ ծայրիցն է, որը այժմ չա-
րուած է մանր քարերով, և տեղ տեղ
էլ ծածկուած է հողի ու քարի կոյ-
տերով:

Դրան կամարի ներքե քանդակուած
կայ մի քառաթև խաչ բոլորիչ և ծաղ-
կանկար շրջանակով. Արևմտեան ծայ-
րից՝ գրեթէ 4 1/2 արշինաչափ լայնու-
թեամբ այս պատը, տեղ տեղ էլ բո-
լորովին կործանուել է ու բացուել է:
Պատի կատարները գրեթէ բոլոր-
վին մերկացել են քանդակագործ գոռ-
նիկներից, և մասամբ՝ կոփածոյ քա-
րերից:

Արևելեան որմը ճիշդ Տեկոռի արևե-
լեան պատն է ներկայացնում. բաղ-
կացած է 7 հարթ մասերից կամ 8 ան.
կիւններից. որոց մէջ տեղի 3 մասերը,
որ սեղանի արտաքին կողմն է, աւելի
դուրս են միւսներից. որանց կից ալ և
ձախ եռանկիւնի դիրքով թեքվում են
դէպի ներս միւս երկու մասերը, որոնք
և միաւորում են երկու ծայրերի հարթ
և լայն մասերի հետ: Ենեղորոնի 5 մա-
սերի վերայով անց է կենում քանդա-
կագործ գոտին. որի ներքե՝ դուրս ե-
կած երեք մասերի մէջ՝ դրուած են 3
պատուհաններ, իրենց քանդակագործ
շրջանակներով: Որմի զոյգ ծայրերում
դտանուող երկու հարթ մասերի վերայ

էլ դրուած կան մի մի հատ փոքրիկ,
նեղ և երկար պատուհաններ, որոնք
խակապէս ծառայում են խորանները
լուսաւորելու. ալ պատուհանի բար-
ձրը քանդակուած կան զոյգ վիշապ-
ներ, որ փաթաթուելով միմեանց՝
կազմում են պատուհանի կիսաբոլորակ
շրջանակը. ձախ պատուհանի բարձրը
գտանվում է մի տեսակ նոյնպէս գա-
լարուն արձան. որ աղաւաղուած և կո-
տրտուած լինելու առթիւ, ինչ լինե-
լը որոշ կերպով ասեղու՝ ես հրաժար-
վում եմ:

Այս պատի վերայ՝ սակաւ ինչ ներ-
սով դրուած է մի ուրիշ որմ, որի դա-
ղաթը եռանկիւնաձև ու գմբէթանման
է. կենդրոնում գտանվում է քառա-
կուսի և քանդակագործ շրջանակով մի
մեծ պատուհան. դորա կամարի բար-
ձրով անցնում է գեղեցիկ փորուածք.
ներով դարդարուն գոռնիկը, որ տա-
կաւին մնում է անխախտ և անեղծ
դրութեամբ:

Չորս պատերից զազաթմներն էլ ներ-
կայացնում են չորս հատ առանձին ե-
ռանկիւնաձև գմբէթներ, որոնք եկե-
ղեցուն մի տեսակ օրորոցի կերպա-
րանք են տալիս. զոյց վերայ՝ արտա-
քին շքեղութեան համար ձգուած են
եղել նեղ և երկար շերտերը, որոնք
այժմ զահուել են մաշող բնութեան և
աւերիչ մարդկանց հարուածներին:

Ձեղունի վերայից բարձրանում է
ուլթանկիւնակի կաթողիկէն իւր կոնա-
ձև և ութ հարթ մասերից բաղկացած
գմբէթով. Կաթողիկէն մնում է գրե-
թէ բոլորովին նոր դրութեամբ. ունի
չորս հատ միմեանց համանման գեղե-
ցիկ ներդաշնակութեամբ քանդակա-
գործուած կամարակապ պատուհան,
ներ, որոց վերայով անցնում է վե-
րին մասի ծաղկանկար գոտին կամ
զարդարուն գոռնիկը:

Գմբէթի վերայ ձգուած են՝ աղիւս,
ներից միմեանց վերայ դարսուած բազ-
մաձալ շերտերը, որ տեղ տեղ կո-
տրտուած և խախտուած լինելով՝ մա-
սամբ ծածկուած են կանաչ մամուռով:

Եկեղեցիքն հաստատուած է արտա-
քուստ կոփածոյ կարմիր և սև, իսկ
ներքուստ՝ թուխ, կարմիր և գորշ ա-
ւելի կարծր քարերով:

Ներքի կողմից կաթողիկէ եկեղեցին
նոյնպէս քառակուսի դիրք ունի, եր-
կու բաւականի մեծկակ խորաններով,
և սեղանի ներքևում գտանվող կամա-
րակապ պահարանով. կենդրոնում դը-
րուած 4 հատ վիթխարի և բազմախորշ
սիւնների կառարներին՝ ամրացած են
լայն և բազմաձև վերնախորիսխնե-
րը, որոց վերայ յենուած են մանկա-
ձև չորպալանների ծայրերը. դոքա բար-
ձրանալով՝ կազմում են մի բոլորակ գո-
տի, որ է կաթողիկէի պատուանդանը:
Այս կողմից՝ եկեղեցու կաթողիկէն
նոյնպէս ութը հարթ մասերի կամ ան-
կիւնների է բաժանվում. գմբէթը զար-
դարուած է 16 հատ գրեթէ երեքական
վերջը լայնութեամբ տափարակ շեր-
տերով, որոնք հաստատուած են կար-
միր և գորշ կոփածոյ քարերից:

Հարաւային և արևմտեան որմերի
ճակատներին քանդակուած կան թը-
ւով 42 հատ մանր և խոշոր խաչարձան-
ներ, դոքա փորուած են կարմիր քա-
րերի վերայ զմայլեցուցիչ նկարներով:
Որմերը մի ժամանակ ծածկուած են
եղև ներկուած պատկերներով և սև
մակագրութեամբ, որոց անշնան հետ-
քերը միայն նկատելի են այսօր:

Ունի ընդ ամէնը 12 կտոր արձանա-
գրութիւնք, որոնք դրոշմուած են ար-
տաքին կողմում, արևմտեան և հարա-
ւային որմերին:

Առաջինը՝ փորագրուած է արևմ-
տեան պատի վերայ, դռան ձախ կող-
մում՝ Նիսի թուականին, որից երևում
է, որ մի վարդապ որդի Դաւիթ անու-
նով մարդ, իւր գետեղըր ունեցած այ-
գին ընծայել է կաթողիկէին, պար-
տաւորացընելով եկեղեցականաց՝ մին-
չև միւս անգամ՝ Գրիստոսի գալուստը,
բարեկենդանի ուրբաթ օրերին իւր ա-
նուանը պատարագ մատուցանել. այս
բանի խափանող կամ յափշտակողնե-
րին անիծում է, իսկ ճշգրտութեամբ կա-

տարողներին մաղթում է Աստուծոյ և
բոլոր սրբերի օրհնութիւնը:

Երկրորդը կից է սորան, որով Շա-
հանա՛հ Աշոտի դուստրը, Սոփիա Հա-
յոց և Վրաց թագուհին, տուել է և
հաստատել Դաւիթի այգին սուրբ Կա-
թողիկէի՝ Տէր - Սահակի ձեռք, Դաւի-
թի հոգու փրկութեան և իւր ու Գագիկ
Շահանա՛հի արեւատութեանը համար.
յափշտակել ջանացողին զրկում է Աս-
տուծոյ « բանէն »: Իսկ հրամանակա-
տարներին Աստուծոյ օրհնութեանն է
արժանացնում:

Երրորդը մակագրուած է նոյն որմի
վերայ, որից երևում է, որ Տէր - Սա-
հակ Արշարունեանց եպիսկոպոսի խըն-
դրանաց համաձայն՝ Գագիկ Շահան-
շահը ազատել է Մրէնի մարդու և եղի
կուր. Տէր - Սահակը պէտք է առանց
մոռանալով՝ փրկից նորա մեղքերին
թողութիւն խնդրէ: Ով որ այս հա-
մանին, թէ իւր որդիքներից և թէ օ-
տարներից, ընդգդիմանայ՝ իւր ազգի
մեղաց և Գրիստոսի արեանը պարտա-
կան կը լինի, իսկ կատարողներին՝ օրհ-
նում է:

Չորրորդը գրուած է սորա ներքև
խոշոր տառերով.

« Վահան քահանայ զԵՈՂ »:

Հինգերորդը սորա ներքևումն է Նշ-
թուականին մակագրուած՝ Տէր - Պե-
տրոսի և Տէր - Խաչիկ Հայոց կաթողի-
կոսների հայրապետութեան ժամա-
նակ, որ Աշոտի որդի Գագիկ Շահան-
շահի հրամանն է, ազատել Մրէնի
հարկը « զծուծ և միւր, զկապիճքն... »
կատարողներին օրհնում է, իսկ հա-
կառակողներին ՅԺԸ հայրապետների
նշովքին է ենթարկում:

Վեցերորդը սորա ներքևումն է խո-
շոր տառերով.

« Ի Յաբեմեան Տոմիս տոմարիս եւ Թը-
վին Ի ՇԺԻ ամաց... »:

Եօթներորդը հարաւային որմի վրայ
է Զ թուականով, Կոստանդեայ Հա-
յոց կաթողիկոսի հայրապետութեան և



Քանդակը արեւմտեան դրան կամօղիկէին



Քանդակը հարաւային դրան կամօղիկէին

Տէր — Գրիգորի առաջնորդութեան ժա-
մանակ, Շահանշահի հրամանաբեր զը-
րուած. որով խստիւ արգելւում է ե-
պիսկոպոսներին առանց ընտրութեան
— կաշառքով — (թէ ինչ առնել եղ-
ծուած է). գիրը ջննդին անիծում է
այսպէս :

« Տնչի 'ի կենաց գրոյն » :

Ութերորդը նոյն որմի վերայ է, ԶԻԲ
թուականով, որից երևում է, որ մի
պարոն Սահմատին անունով մարդ՝ ա-
զատել է սուրբ ուխտի Արջկան, Մրէն
և Աւշականում ունեցած այգիքն հար-
կից և ուրիշի ձեռքերից մինչև « ի ծա-
գումն ֆրիստոսի » :

Իններորդը հարաւային որմի վերայ
է ԶԻԳ թուականին զրոյմուած, և պատ-
կանում է Աւետեց որդի Պարոն Սէ-
նապ Սահմատինին և նորա կենակից
Ուրգուրիտայ տիկնոյր, որոնք թողել
են « տասնակն հացին » շարիաթը, իւ-
րեանց և որդւոցը արեւայտութեան
յիշատակ և մեղքերի թողութեան .
մշտնջնաւոր մակադրութեանս խա-
փանել ջանացողին անիծում են, պար-
տական անելով նորան փրկչի սպան-
ման արիւնով և սատանայի դատաս-
տանով, իսկ հաստատ պահոյներին
օրհնում են : Սորան կից է հետեւեալը .

« Կիկիջանայ ամիրութեամբս գրեցաւ » :

Տասներորդը փորագրուած է մի և
նոյն պատի վերայ ԶԼԷ թուականին
(հայկական), որ յիշելով Աստուծոյ ա-
նունը և երկնային ու երկրային զօրու-
թեան միջնորդութիւնը, Պարոն Սէ-
նապ Սահմատին և նորա ամուսին Ուր-
գուրիտան՝ իւրեանց մեղքերի փրկու-
թեան և որդւոցը երկար կենդանու-
թեան համար, թողել են Մրէնի հա-
ցի շարիաթը, այգիների գինը և խա-
ղողի խալէն, որ ոչ որ չխառնէ . խա-
փանողներին ենթարկում է Աստու-
ծոյ և ՅժԷ հայրապետների նշովքին :
Մետասաներորդը զրոյմուած է խա-
չարձանի ներքև հետեւեալ խօսքերով .

« Ո՛վ սուրբ խաչ փրկական եւ ներկեալ
արեամբ Որդոյն Աստուծոյ, ի քեզ ապաւի-
նեցաք ծառայքս խաչելոյն ֆրիստոսի եւ
Մարտիրոս եւ ամուսին իմ՝ վարդուստ եւ
հարազատ որդիք մեր փարսամն հմա է : ...
Սգա քահանայ եւ քոյր մեր Նճին կանգնե-
ցաք զխաչս բարեխաւս մեզ եւ ծնողաց մե-
րոց եւ զաւակաց մերոց, արդ աղաչեմք » :

Երկոսասաներորդը նոյն որմի վերայ
է, ԶԻԶ թուականին, Տէր — Յակովբի
հայրապետութեան, Ղևոնի թագաւո-
րութեան և Սահմատինի պարոնու-
թեան ժամանակ փորագրուած, որ
պարտք է զրվում (թերեւս պատա-
րագի մէջ), խորանի վերանորոգող
Մխ... (գուցէ Մխիթար) վարդա-
պետի և նորան օգնողներին յիշել :
Այս մակադրութիւնը ճշգրութեամբ
օրինակուած կան միայն Հ. Ներսէս
Սարգիսեանի « Տեղեկագիր Հայոց մե-
ծաց » ճանապարհորդութեան մէջ :

Այս եկեղեցին տեղի յարմարու-
թեան առթիւ, մինչև 1877—1878 թուի
ռուստաճկական պատերազմի ժամա-
նակ, Մրէնում ձմեռանոց եկող (զըշ-
լայ) քիւրդ խաչնարածներին ծառա-
յելիս է եղել անասնոց, մանանդ
ուխարների բնակարանի տեղ, ուր դի-
գուած էր ահաբեկն բարձրութեամբ
գարշելի անմաքրութիւնք, հողի ու
քարի շեղջիւրը, որոնք թէ և 1879 թուին
տեղական հոյաղն դաւառապետի ա-
ռաշարկութեամբ մաքրուած է եղել,
բայց ափսոս, որ այդ անմաքրութիւնքը
դիգուած են կաթողիկէի արեւմտեան
և հարաւային որմերի առջև, որոց մէջ
և սրբութեան տաճարը թաղուած է մի
քանի արշին խորութեամբ : ...

Կաթողիկէ եկեղեցու արեւելեան և
հարաւային կողմերում գրուած են ե-
ղել քիւրդի բնակարանները, որոնք մե-
տաւորապէս կարելի է 500 տուն հա-
շուել. դոցա մէջ տեղ տեղ նկատելի
են բազրատունի թաղաւորների և մե-
ծամեծաց բնակարանների մնացորդնե-
րը, ուր 900 թուականներում՝ Ունի քա-
ղաքից, զանազան ամարանոցներից և
աւաններից աշնան ժամանակ տեղա-
փոխուելիս են եղել նոքա :

Եկեղեցուց մի քանի հարիւրաւոր քայլափոխ հեռաւորութեամբ՝ կանգնած կայ մի մեծ շինութեան հետք կամ մնացորդ. դա իւր զմայլեցուցիչ նկարներով, մանր, խոշոր և բազմատեսակ քանդակներով գրաւում է այցելուի բոլոր ուշադրութիւնը. դոքա աւանդաբանից յիշեցնել են տալիս փառաւոր անցեալի դեղնային պատկերը . . . կարծես այդ դիակացած բեկորներից պիտի դիմաւորեն քեզ Արամազդի որդիքը — Հայոց քայերը . . .

Այդ կիսաւեր որմը՝ որ հաստատուած է կարմիր քարերով, շինութեան արեւմտեան պատնէ. բարձրացած է մի քանի կարգ աստիճանների վերայ. արտաքին հրեսը մարդկայէս կազմուած է խիտ քանդակներից. երեք քառակուսի խորշերի վերայով անցնում են երկու կարգ ծաղկանկար գոռնիքներ, որոց վերայ դրուած են թուով վեց հատ խաչարձանները. դոցանից աջակողմանը գրեթէ 2 1/2 արշին բարձրութիւն ունի, և գտնւում է քանդակագործ շրջանակի մէջ: Խաչի պատուանդանը ներկայացնում է մի ուրիշ քառաթև խաչ: Այդ քնարածի խաչարձանի բարձր մի և նոյն քարի ճակատին՝ կարգով շարուած կան սլորիչ հինգ հատ խաչեր: Սորա մօտ գտնւում է երկրորդ խաչարձանը՝ մի և նոյն բարձրութեամբ. ջոկվում է աւանդից այն զանապանութեամբ միայն՝ որ այստեղ խաչը քնարածի չէ, և նորա բոլորակ պատուանդանը կողմուած է մի խումբ ամենամանր խաչարձաններից (2. 12): Սորան կից են միւս չորս խաչերը, որոնք յար և նման են միմեանց, միաշափ հաւասար մեծութեամբ և միատեսակ քանդակներով: Դոցանից երկուսը դրուած են ներքին և երկուսն էլ վերին կողմում, առանց կլորակ պատուանդանի, քառակուսի դիրքով քանդակագործ շրջանակների մէջ գետեղուած: Խաչերը առհասարակ զարդարուած են ծաղկանկար և զալարուն, կիսաբոլոր ու քառակուսի մանր քանդակներով:


Ներքուստ որմը շարուած է կարմիր կոխածոյ քարերով, հարթ և հաւասար դրութեամբ: Տեղագծին նայելով՝ սա մի բաւականի մեծ բնակարան, կամ թերես եկեղեցական մի նշանաւոր շինութիւն է եղել մի յարկից բաղկացած: Այս մնացորդի նոր և անաղարտ դրութիւնից կարելի է եզրակացնել, որ բնութիւնը իսպառ չէ մասնակցել դորա կործանմանը, այլ անգուլթ մարդիկների կործանիչ ձեռքերը բնաջինջ են արել դորան: . . .

Այս աւերակին շրջակայ գիւղերի թէ՛ Հայ և թէ՛ մահմետական բնակիչները աւանդութեան հետեւելով՝ « Ղարա — քեօխի » պալատ են անուանում, ասելով, որ իբրև սկզբում այդ տեղ բնակուելիս է եղել « Ղարա » անունով տեղական գիւղաւաղը:


Սորանից սակաւ ինչ հեռու հարաւային բնակարանների կենդրոնում, քարի և հողի շէջերի մէջ կանգուն կան երկու կտոր ուրիշ շինութեանց բեկորներ, որոնք հաստատուած են կարմիր քարերով, տեղ տեղ զմայլեցուցիչ նկարներով և քանդակներով զարդարուած: Դոցանից մէկը որ դռան նմանութիւն ունի, « վարդան քեօխի դարպաս » է կոչվում, իսկ երկրորդը՝ հաւանական է դիտանոց կամ բուրգի մնացորդ կարծել:

Կաթողիկէ եկեղեցու արեւմտեան և հիւսիսային կողմերով, ըստ մեծի մասին դրուած են այգիները, որոնք կարելի է թուով աւելի քան 1200 համարել: Բոլորն էլ պատած են ցածրիկ, բայց քարեայ ամուր շրջապատներով. այգիների մէջ տակաւին գտնւում են աննշան քանակութեամբ՝ վայրենացած պտղատու ծառեր. իսկ քարախիտ ձորակում՝ բռնուում է բաւականի համեղ խաղող: Այգիներից շատերի մէջ ես պատահեցայ 2 — 6 հատ մանր և խոշոր տապանաքարերի, և մի քանի տեղ էլ գինու հնձանների: Գիւղը ուրիշ տեղ գերեզմանատուն չէ ունեցել:


Մըէնը ընկնելով կողքի և կազգուանի աղահանքերի գրեթէ մէջ տեղում:



Յատակագիծ եկեղեցւոյն Մըննոյ



Խաչքար 13-րդ դարի Մարտիրոսի



Խաչքար 13-րդ դարի Մարտիրոսի

չափազանց շոռ (աղի) հող ունի, և զուրկ է թէ վազող և թէ բղետող ջրերից, որից հետևում է և այն կարծիքը՝ թէ ջրի պակասութեան առթիւ աւելում է այդ պատուական և մարդաշատ աւանը։ Դորա միջից մի ժամանակ հոսելիս է եղել խնձկոնից ուխտի փոքրիկ գետակը, որը վաղուց արդէն ընկնելով իւր բնական ճանապարհը՝ ոռոգում է Մեծ — Մալրակի գալուստը և յագեցնում է երկը քիւրդական ամարանոցների ժողովրդեանը և անասուններին։ Կլիման չափազանց տաք է է և փնասակար։

Մրէն իւր բոլոր հողերով և անգամ սրբութեան տաճարով, բնակարանների մնացորդներով և ճարտարարուեստ խաչարձանների գեղեցիկ հիւսուածքներով, պատկանում է քիւրդ ֆիթթէքի որդի Բիշար-աղին, որի մահուան պատճառով այժմ օգտվում է նորա կինը, ստանալով քիւրդ խաչարածներից վճար, տարեկան 55 տուկր օսմանեան լիւրա (500 ուրլի) :

ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆՑ

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ

Ար' եկ որ մրտնուճք պաղշան,
Ու վարդ քաղենք, ծաղկեցաւ այդին,
Պիւլպիւն ու տուտի զումրին,
Քաղցըր ձայնիւ
Եղանակեն կանանչ թրփին .
Հետ կարմիր վարդին, հետ կարմիր վարդին,
Հետ մեր սիրելեաց :

Գոյնըզգոյն ծաղկունքն եկեալ,
Ու ետաբերք եղեն պըլպուլին :
Մանուշակ ու հազըրվարդ
Մատուցանեն
Կանանչ թրփին, ուրախանան
Հետ ճերմակ վարդին, հետ ճերմակ վարդին,
Հետ մեր սիրելեաց :

Նըռնենիքըզ զուգաշար,
Մարգըրտաշար, խիստ զարմանազան .
Համն անուշ, հոտիկն անուշ,
Քան զնուշն անուշ .
Կանանչ թրփին ուրախանան
Հետ կարմիր վարդին, հետ ճերմակ վարդին,
Հետ մեր սիրելեաց :